**«Էդիթ Պրինտ» հրատարակչություն**

# *Ավարտական հետազոտական աշխատանք*

***Թեմա՝ Ուսուցիչների համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ կրթության կազմակերպման և դաստիարակության հարցերում***

***Առարկա՝ Տարրական դասարաններ (դասվարներ)***

***Ուսուցիչ՝*** **Ն.Մելքումյան**

**Դպրոց՝ ք. Երևանի Կ.Ասրյանի անվան թիվ 171 հիմնական դպրոց**

**Ղեկավար՝ Աիդա Խալաթյան**

2023թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**.....3

**ԳԼՈՒԽ 1**

**ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ**.....6

1.1 Կրթության կազմակերպման և դաստիարակության հարցերում սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ ուսուցիչների համագործակցության նորմատիվ-իրավական հիմքը.....6

1.2 Ուսուցչի համագործակցությունը տարրական դպրոցի սովորողի ծնողի կամ նրան օրինական ներկայացուցչի հետ՝ որպես սովորողի կրթության և դաստիարակության նախապայման.....7

1.3 Տարրական դպրոցի սովորողների ընտանեկան դաստիարակության ազդեցությունը դպրոցում վերջիններիս վարքի և առաջադիմության վրա.....10

1.4 Ծնողական ժողովների կարևորությունը սովորողների կրթության ու դաստիարակության համատեքստում.....13

**ԳԼՈՒԽ 2**

**ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ ԹԵՄԱՅՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԸՆԹԱՑՔԸ**.....15

4. **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....19**

5. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....20**

6. **ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**«Երեխաների դաստիարակությունը պետք է սկսվի ծնողների դաստիարակությամբ: Ծնողներն են, որ պետք է դառնան մեր օգնականները, գործընթացի մասնակիցները, երեխաների դաստիարակության գործընկերները»:**
**Վ.Ա.Սուխոմլինսկի**

Տարրական դպրոցի և ընտանիքի համագործակցությունը իրենից ներկայացնում է նպատակաուղղված և երկարատև աշխատանք, որն էլ իր հերթին ենթադրում է գործողությունների մի ամբողջական համակարգ ուղղված սովորողի կրթական կարիքների ու պահանջմունքների վերլուծությանն ու բարելավմանը: Դասվարի և սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի հետ համագործակցությունը պետք է իրականացվի հաշվի առնելով բարձր մարդկային որակները, էթիկայի նորմերը: Ծնող կարող ենք անվանել այն բոլոր անձանց, ովքեր ներգրավված են երեխայի դաստիարակման գործում: Որպես օրենք, հայրն ու մայրը հոգում են երեխայի դաստիարակման ու կրթության համար, սակայն նրանցից բացի, հաճախ երեխայի դաստիարակման հարցում պատասխանատվություն են կրում տատիկը, պապիկը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, խորթ մայրը, խորթ հայրը, խնամակալը, դայակը և այլն: Դասվարը և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու կարողությունը: Ընտանիքը պետք է լինի համախոհների խումբ և գործի դպրոցի հետ համատեղ: Ծնողների ներգրավվածությունը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը, այնպես էլ դպրոցում, նշանակում է ծնողների մասնակցություն կանոնավոր, բազմակողմանի կապերում, աշակերտի ուսման գործընթացում և դպրոցի այլևայլ միջոցառումներին:

Դպրոցների մանկավարժական կոլեկտիվները իրենց առաքելությունը պետք է տեսնեն ոչ միայն սովորողներին գիտելիքներ տալու, այլ բարոյական, մարդասիրական հատկանիշներով օժտված, ազգային և համամարդկային արժեքներ կրող քաղաքացիների, հասարակությանը նպաստ բերող ու գործուն անհատների դաստիարակման մեջ: Այդ առաքելությունը կարելի է իրագործել միայն մանկավարժական կոլեկտիվի, սովորողների և նրանց ընտանիքների հետ սերտ համագործակցության պայմաններում:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**: Սույն հետազոտության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ մեծաքանակ աշակերտներով տարրական դպրոցի դասարաններում ժամանակի սղության պատճառով գործունեության արդյունավետության և որակի բարձրացումն անհնար է առանց դասվարի և ծնողների արդյունավետ համագործակցության,քանի որ հնարավոր չի լինում անհրաժեշտ ուշադրություն դարձնել, բավարար րոպեներ տրամադրել այս կամ այն աշակերտի գիտելիքների հիմնովին ստուգմանը՝ անկախ նրա առաջադիմությունից, ակտիվությունից և այլնից: Համագործակցությունն ուղղված է միասնական կրթական տարածքի, միասնական սոցիալական միջավայրի ստեղծմանը, սովորողների հետաքրքրությունների և անձնական որակների զարգացմանը՝ սովորողի կրթության ու դաստիարակության իրավունքի և այդ իրավունքի իրացման ճանապարհին ծնող-ուսուցիչ առողջ համագործակցային հարաբերությունների առաջնանյության կարևորմամբ:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ:**

Ներգրավել ծնողին դպրոցական գործընթացին, դասարանական, համադպրոցական, արտադասարանական միջոցառումներին, կապ ստեղծել դպրոցի և սովորողի ծնողի միջևհամագործակցելով ուսումնա-դաստիարակչական աշխատանքների կազմակերպման ժամանակ, ինչը բարենպաստ պայմաններ կստեղծի սովորողի լիարժեք սոցիալական զարգացման, դաստիարակության և կրթության համար՝ մատնանշելով բոլոր այն եղանակներն ու միջոցները, որոնք թույլ կտան ամրապնդել դպրոց-ծնող համագործակցությունը նպատակ ունենալով

նպաստել սովորողի ուսումնառության որակի բարձրացմանը՝ հաստատելով այդ փոխգործակցության դրական ազդեցությունը սովորողի կրթության ու դաստիարակության գործընթացում:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ** :

Ինչպես ներգրավել ծնողներին տարրական դպրոցում ուսումնադաստիարակչական խնդիրների լուծման գործընթացին և երեխաների կրթությանը վերաբերող հարցերի մասին որոշումներ կայացնելու գործում՝ ծնող-ուսուցիչ համագործակցության կրթության որակի վրա ունեցող բացառապես դրական ազդեցության կարևորմամբ:

**ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿԸ:**

Ուսուցիչ, 15 տղա, 15 աղջիկ աշակերտներ և նրանց ծնողները:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱԾԸ:** Սա կայանում է այն ենթադրության մեջ, որ տարրական դպրոցի մանկավարժական կոլեկտիվի, սովորողների և նրանց ծնողների համագործակցությունը մեծ մասամբ կարող է հիմնվել նրանցից յուրաքանչյուրի կողմից իրենց դերի գիտակցման, նրանց փոխըմբռնման, փոխօգնության, ընդհանուր հետաքրքրությունների և արժեքների վրա:

## ԳԼՈՒԽ 1

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

**«Ուսուցիչները գտնում են, որ ընտանիքները չեն ցանկանում մասնակցություն ունենալ, այնինչ, իրականում ընտանիքները չգիտեն ինչպես մասնակցել»**

**Կարեն Սալինասը (դպրոցի, ընտանիքի և հասարակության հետ գործընկերության կենտրոնի կապերի տնօրեն, Ջոն Հոպկիսի համալսարան)**

## 1.1 Կրթության կազմակերպման և դաստիարակության հարցերում սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ ուսուցիչների համագործակցության նորմատիվ-իրավական հիմքը

Կրթության և դաստիարակության հարցերում սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ ուսուցիչների համագործակցության կազմակերպման նորմատիվ-իրավական հիմքը կազմում են ՀՀ սահմանադրությունը, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, «Ուսուցչի կարգավիճակի մասին», «Հանրակրթության մասին» և «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, ՀՀ Ընտանեկան օրենսգիրքը, Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության ռազմավարական ծրագիրը, ՀՀ կառավարության մի շարք որոշումներ, ԿԳՄՍ նախարարի հրամանները:

Վերոնշյալը ստեղծում է իրավական պայմաններ հասարակության և պետության կարիքներին համապատասխան կրթական համակարգի նորացման և զարգացման համար, ընդլայնում է քաղաքացիների կրթական հնարավորությունները, հաշվի առնելով, այն որ, կրթության արդիականացման ռազմավարական ուղղություններից է դպրոցի և ծնողական համայնքի սոցիալական գործընկերությունը, ծնողների և օրինական այլ ներկայացուցիչների իրավունքներն ու պարտականությունները՝ որպես ոչ միայն որպես կրթական հարաբերությունների իրավասու մասնակիցներ, այլև որպես ուսումնական գործընթացի մասնակիցներ, նրանք ներկայացնում են անչափահաս սովորողների օրինական շահերը՝ առանց հատուկ լիազորությունների: Ուսուցչի մասնագիտական չափորոշիչը, հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգերի բնութագրիչները պարունակում են դրույթներ, որոնք սահմանում են աշակերտների ծնողների հետ աշխատելու համար անհրաժեշտ իրավասությունները և հմտությունները:

## 1.2 Ուսուցչի համագործակցությունը տարրական դպրոցի սովորողի ծնողի կամ նրան օրինական ներկայացուցչի հետ՝ որպես սովորողի կրթության և դաստիարակության նախապայման

Ուսուցչի և սովորողի ընտանիքի միջև համագործակցությունը սահմանվում է որպես ուսուցիչների և ծնողների համատեղ գործունեություն երեխայի դաստիարակության և կրթության որակի և արդյունավետության նպատակով, կազմակերպված հաղորդակցություն, փորձի փոխանակում, հնարավոր խնդիրների համատեղ լուծումների որոնում: Մեծ է ուսուցչի դերը սակայն ուսուցիչն ավելի վստահ ու գործուն է առաջ շարժվում, երբ սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցչի հետ ունի ընդհանուր նպատակ: Այս առումով առանցքային է երկու սուբյեկտների առողջ համագործակցումը: Ծնողների հետ փոխգործակցությունը դպրոցի և յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքում հրատապ և բարդ խնդիրներից է: Ծնողների «ներգրավվածություն» տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր առաջադիմություն, այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, սովորողի մոտ զարգանում է սոցիալական շատ կարևոր հմտություններ և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Շատ բան կախված է ուսուցչի ինտուիցիայից, հմտությունից, ով պետք է վերլուծի տարբեր հանգամանքների համալիրը, որպեսզի ճիշտ որոշում կայացնի որոշակի իրավիճակում ծնողների և սովորողի հետ շփվելու մեթոդների և միջոցների ընտրության հարցում: Ծնող-ուսուցիչ կապի պահպանումը ուսումնական գործընթացում աշակերտի հաջողության բանալին է, իսկ ծնողների և դպրոցի միջև կապի բացակայությունը, ինչպես նաև դպրոցի ու ծնողների չհամաձայնեցված գործողությունները վնասում են երեխայի կրթությանն ու դաստիարակությանը: Ծնող- դպրոց կապը ավելի կամրապնդվի, եթե հաճախակի հրավիրվեն ծնողական ժողովներ, հանդիպումներ, խորհրդատվություններ, տարբեր հետաքրքրաշարժ միջոցառումներ: Այդ կապը էլ ավելի կզարգանա, եթե օգտագործվի ժամանակակից տեխնոլոգիաներ [2]:

Օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները /համակարգիչ, հեռախոս/ կարելի է ծնողների հետ քննարկումները կատարել հեռավար:

Ամերիկյան ուսուցիչների վերջին ժամանակներում անցկացրած հարցումների արդյունքում բացահայտվեց, որ տարրական դպրոցի նոր մանկավարժների 20 տոկոսը ծառայողական սթրեսի կարևոր պատճառը համարում են ծնողների հետ հարաբերությունները:

Ծնողների ակտիվ ներգրավումը դրական է անդրադառնում և դպրոցական հասարակության, ծնողների և աշակերտության վրա: Ստորև քննարկենք յուրաքանչյուր խմբի օգուտը:

Օգուտ աշակերտին: Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում,, աշակերտն ավելի լավ ձեռքբերումներ է ունենում, չնայած այն բանին, թե ինչպասին է ընտանիքի սոցիալ - տնտեսական կարգավիճակը, էթնիկական ծագումը կամ ծնողների կրթության մակարդակը: Աշակերտը, որի ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, ավելի հաջողությամբ է ավարտում դպրոցը և ուսումը շարունակելու ավելի լավ հնարավորություններ և պայմաններ ունի: Վիճակագրական տվյալներով, եթե ծնողները կապված չեն ուսուցիչների հետ կամ հետաքրքրված չեն դպրոցի առօրյա կյանքով, դրանց երեխաների ակադեմիական առաջադիմությունը մյուս երեխաների համեմատությամբ ավելի ցածր է: Երբ ծնողները ներգրավված են դպրոցի կյանքում, աշակերտներն ավելի դրականորեն են տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունեն:Այն աշակերտները, որոնց ծնողներն ակտիվորեն են ներգրավված դպրոցի կյանքում, ավելի լավ վարք ունեն, և նրանց դեմ կիրառված կարգապահական պատժամիջոցների միջին ցուցանիշներն ավելի ցածր են մյուսների համեմատությամբ: Դպրոցի կյանքին մասնակից ծնողների երեխաները ավելի լավ հարաբերություններ ունեն ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ: Տարբեր կուլտուրական միջավայրից դուրս եկած աշակերտները ավելի

առաջադեմ են, երբ ծնողները և ուսուցիչները միասնաբար ձգտում են ընտանիքում և դպրոցում եղած կուլտուրական տարբերությունների համատեղ համաձայնեցմանը.

Օգուտ ծնողին: Ծնողների ներգրավվածությունը կարևոր է ինչպես աշակերտի ուսման արդյունքների բարելավման, այնպես էլ ծնողի ունակություն-հմտությունների զարգացման համար: Փոխվում է ծնողի սոցիալական, զգացմունքային կողմը և անձնական հատկանիշները: Երեխայի կրթության գործընթացին մասնակցելու հետևանքով ծնողը ավելի է հասկանում սեփական երեխային, ավելի մեծ ուշադրություն է հատկացնում երեխայի սոցիալական, զգացմունքային և մտավոր զարգացման անհրաժեշտություններին: Ծնողը դառնում է ավելի հոգատար, ավելի նվազ խիստ որդու հանդեպ և ավելի շատ է գնահատում որդու ձեռքբերումները, դառնում է ավելի ինքնավստահ և հաճույքով կցվում է երեխայի կրթության և դաստիարակության գործընթացին: Նա ավելի ինքնավստահ է որոշումներ կայացնելիս, ավելի շատ ուշադրություն է դարձնում սեփական գիտելիքների մակարդակին և ունակություն/հմտությունների բարձրացմանը,ավելի առաջադիմորեն է օգտագործումայլևայլ հնարավորությունները սեփական ընտանիքի և որդու կարիքների բավարարման հմար, իր երեխային տալիս է հնարավորություն, ավելի վստահորեն արտահայտելու սեփական տեսակետները, հիմնխնդիրները: Ավելի դրական հարաբերություններ է ստեղծում իր երեխայի ուսուցիչների հետ, ավելի լիիրավ է տիրապետում երեխայի վիճակի մասին տեղեկությանը և ժամանակին միջոցներ է ձեռք առնում նրա հիմնախնդիրները լուծելու նպատակով:

Օգուտ ուսուցչին: Ծնողների հետ ակտիվ համագործակցությունը տարրական դպրոցի ուսուցչին օգնում է ավելի ինքնավստահ դառնալուն:Ուսուցչի մոտ հանդես է գալիս ավելի հարգանք սեփական մասնագիտության նկատմամբ: Նրանք ավելի են բավարարված իրենց մասնագիտությունից և նրա արդյունքներից: Ծնողների ներգրավվածությունը բարձրացնում է ծնողի և ուսուցչի միջև կապվածության որակը, ինչը օգնում է ուսուցչին պարբերաբար ստանալ սպառիչ տեղեկություն երեխայի մասին: Աշակերտի անհատական կարիքների կարգավորումը ուսումնական գործընթացի կողմից ուսուցչին ցանկալի արդյունք կտա: Ուսուցիչն օգտագործելով

ժամանակակից տեխնոլոգիաները կարող է աշակերտի առաջընթացի մասին հաշվետվություն ուղարկել տուն շաբաթական կամ ամսեկան մի քանի անգամ: Հաղորդակցման այս ձևը ծնողներին տալիս է սովորողի գիտական առաջընթացի շոշափելի վկայություններ:

Օգուտ տարրական դպրոցին: Ծնողների ներգրավվածությունը դրականորեն է ազդում ընդհանրապես դպրոցի վրա: Դպրոցը ծնողների կողմից ավելի աջակցում ունի, աճում է դպրոցի հեղինակությունը հասարակության մեջ: Դպրոցական ծրագրերը, որոնցում մասնակցում են ծնողները, ավելի հաջողված են, քան այն ծրագրերը, որոնցում ծնողները չեն մասնակցել: Այն դպրոցում, որտեղ աշակերտների հաճախումը ճատ ցածր է, ծնողների ներգրավվածության բարձրացումից հետո այդ ցուցանիշը բացահայտորեն կբարելավվի [6]:

Տարրական դպրոցի սովորողը միշտ պետք է լինի ուշադրության կենտրոնում, այդ դեպքում նա կլինի կառավարելի և որոշակի խնդիրների առկայության դեպքում հեշտությամբ կլուծի իր առջև ծառացած խնդիրները: Ուսուցիչը կարող է նաև համագործակցության արդյունքում օգնել սովորողի ծնողին ցանկացած կոնֆլիկտային իրավիճակներում:

### 1.3 Տարրական դպրոցի սովորողների ընտանեկան դաստիարակության ազդեցությունը դպրոցում վերջիններիս վարքի և առաջադիմության վրա

Դպրոցականի առաջադիմությունը սերտորեն կապված է լավ վարքի և, իհարկե, բոլոր առարկաներից լավ գնահատականների հետ: Դրան հասնելու համար պարզապես պետք է լավ սովորել: Սովորելն այն է, ինչը թույլ է տալիս լավ արդյունքների հասնել: Բայց ոչ բոլոր աշակերտները կարող են հաջողության հասնել դպրոցում: Ինչի՞ հետ է դա կապված: Չափազանց շատ գործոններ կան, որոնք ուղղակիորեն ազդում են արդյունքների վրա: Դպրոցական առաջադիմությունը առաջին հերթին կախված է դաստիարակությունից և ծնողներից: Հենց ծնողներն են կարողանում երեխայի մեջ զարգացնել սովորելու և կյանքում ինչ-որ բանի հասնելու ցանկությունը: Վատ է, երբ ծնողները երեխային ստիպում են սովորել և ցանկանում

են նրա օգնությամբ իրականացնել իրենց երազանքները, որոնք իրենք չեն կարողացել իրականացնել [1]: Պետք է հաջողակ մարդու օրինակ լինել երեխայի համար, որպեսզի երեխան ցանկանա հետևել այս օրինակին: Երկրորդ կողմը, որը կախված է ակադեմիական առաջադիմությունից, ընտանիքի ֆինանսական վիճակն է, որտեղ նա մեծանում է: Գումարը չի կարող ամեն ինչ անել, բայց շատ բան կարող է անել: Այսպիսով, դրա բացակայությունը կարող է որոշակի բարդույթներ առաջացնել, իսկ ավելցուկը կարող է փչացնել: Երկու դեպքում էլ կրթությունը կարող է տուժել: Երջանիկ են նրանք, ովքեր գտնում են ոսկե միջինը և կարող են իրենց թույլ տալ խաղաղ ապրել նյութական բարգավաճման մեջ: Դա թույլ կտա երեխային այցելել տարբեր խմբակներ, հնարավորություն ունենալ համակարգիչ, գրքեր գնել և այլն: Երրորդ գործոնը, որն ազդում է առաջադիմության վրա, հենց դպրոցն է և մանկավարժական անձնակազմը:

Դպրոցական աֆորիզմում ասվում է՝ «Երեխաների հետ աշխատելիս ամենադժվարը նրանց ծնողների հետ աշխատելն է»[4]: Ընտանիքը, որպես կրթական կոլեկտիվ, ունի մի շարք առանձնահատկություններ: Առաջին հերթին այն կոլեկտիվ է միավորված ոչ միայն ընդհանուր նպատակով, այլև ազգակցական կապերով: Ծնողական զգացմունքները, ծնողական սերը մի տեսակ կատալիզատոր են, որն արագացնում է անձի զարգացումը: Սա համեմատաբար կայուն թիմ է, որտեղ շփումը տեղի է ունենում անընդհատ, հնարավոր ամենալայն տարածքներում, տարբեր գործողություններում:

Ընտանեկան դաստիարակության ոճերի հետաքրքիր դասակարգում է առաջարկել մանկավարժ-հետազոտող Ի.Պ. Պոդլասային [5]:

1. Դեմոկրատական-ժողովրդավարական ոճ՝ ծնողների գործելաոճ, որը առանձնանում է երեխաների նկատմամբ խիստ վերահսկողությամբ, միաժամանակ կիրառելով պարգևատրման համակարգեր և քննարկումներ՝ սահմանված ընտանեկան շրջանակում երեխայի համար սահմանված վարքագծի կանոններով: Դաստիարակության այս ոճը կիրառելիս, որպես կանոն, ծնողի որոշումներն ու գործողությունները երեխաներին կամայական չեն թվում կամ անարդար, ինչի

արդյունքում երեխաները հեշտությամբ համաձայնվում են նրանց հետ: Այսպիսով, վերահսկողության բարձր մակարդակը զուգորդվում է ընտանիքում ջերմ հարաբերություններով: Ընդգծելով կրթության դեմոկրատական ոճի առավելությունները՝ մանկավարժ-հոգեբան Դ.Բաումրինդը նշում է, որ նման ընտանիքներում դաստիարակված երեխաներն ավելի ինքնավստահ են, ունեն ինքնատիրապետման և սոցիալական հմտությունների ավելի բարձր մակարդակ; Բացի այդ, «ժողովրդավարական» ընտանիքների երեխաները դպրոցում ավելի լավ են սովորում և, որպես կանոն, ունենում են բարձր ինքնագնահատական:

2. Ավտորիտար ոճ՝ այս ոճի համար բնութագրվում է ծնողական վերահսկողության խստագույն մակարդակով, ինչպես նաև բավականին սառը վերաբերմունք երեխաների նկատմամբ. Ծնողները փակ են մշտական հաղորդակցություն երեխաների հետ; սահմանել են խիստ պահանջներ և կանոններ, թույլ չտալով ընտանեկան շրջապատում դրանց քննարկման հնարավորությունը, երեխաներին թույլատրվում է լինել միայն մի փոքր անկախ իրենց ծնողներից: Երեխաները, որոնք մեծանում են «ավտորիտար» ընտանիքներում հակված են լինել փակ, վախկոտ կամ մռայլ, անհնազանդ և դյուրագրգիռ: Նման ընտանիքներում մեծացած աղջիկները պասիվ և կախվածության մեջ են, տղաներ չափազանց ագրեսիվ և անվերահսկելի: Սովորաբար «ավտորիտար» դաստիարակությամբ երեխաները ակադեմիական մեծ հաջողությունների չեն հասնում, բայց կարող են լավ սովորել՝ փորձելով ստանալ դրական գնահատական, ծնողների կողմից սեր ու գովասանք ստանալու համար:

3. Լիբերալ-ազատական ոճ՝ ներառում է վերահսկողության ցածր մակարդակ և ջերմ ծնող-երեխա հարաբերություններ, հիմնված է երեխաների նկատմամբ նվազագույն վերահսկողության վրա նրանց հետ պահպանելով բարեկամական և անկեղծ հարաբերություններ: Ինչպես նշել է Դ. Բաումրինդը, շատ «ազատական» ծնողներ չափազանց ձգտում են ցույց տալ «անվերապահ սեր» երեխային, դադարելով կատարել կարևոր ծնողական գործառույթները, մասնավորապես՝ արգելքներ չսահմանելով իրենց երեխաների համար [3]: Հաճախ «ազատական»

դաստիարակության երեխաները չգիտեն, թե ինչպես դիմադրել իրենց սեփականին թույլ կողմերին և միշտ անձնատուր են լինում դրանց, չափից դուրս իմպուլսիվ են, հաճախ չգիտեն ինչպես ղեկավարել իրենց հասարակության մեջ: Սակայն ամեն ինչ այդքան ողբալի չէ՝ նման դաստիարակությամբ երեխաներ կարող է մեծանալ բավականին դրական, ակտիվ, վճռական և ստեղծագործ մարդիկ. Ուսումնական գործընթացում «ազատական» երեխաները կարող են դրսևորել սովորելու չկամությունը, լինել անուշադիր, խանգարել այլ աշակերտներին դասի ժամանակ:

## 1.4 Ծնողական ժողովների կարևորությունը սովորողների կրթության ու դաստիարակության համատեքստում

Ծնողների հետ շփումը մեծ արվեստ է, ուսուցիչների հաջող աշխատանքի անհրաժեշտ բաղադրիչ: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դասարանական ժողովների ժամանակ առաջացած խնդիրները, քննարկվում են սովորողների հնարավոր վարքային, կրթական և այլ բնույթի հարցերը: Ծնողների հետ մշտական կապի մեջ լինելու, հնարավոր խնդիրները, դասարանում առկա կազմակերպչական հարցերը քննարկելու համար դասարանի ղեկավարը սահմանված կարգի համաձայն պետք է անցկացնի ծնողների հետ ընդհանրական հանդիպումներ ծնողական ժողովներ: Սա այն հարթակն է, որտեղ թե ուսուցիչը, թե սովորողի ծնողը հայրը, մայրը, օրինական ներկայացուցիչը, ունեն հնարավորություն ուղիղ հաղորդակցման: Առաջին հերթին հարկավոր է ստանալ այնպիսի տեղեկություններ որոնք անհրաժեշտ են երեխաների հետ աշխատելիս: Հայտնի է, որ ով գիտի կարևոր տեղեկություններ երեխաների մասին, նա էլ տիրապետում է դաստիրակչական իրավիճակին: Դասղեկի համար այդպիսի տեղեկությունները նրա մասնագիտական հարստությունն են, որոշումներ ընդունելու հիմքը: Հաջողված է այն դասարանը, որի ղեկավարը հաճախակի հրավիրում է ծնողական ժողովներ, ներկայացնում է սովորողների առաջընթացի մասին, քննարկում սովորողի հետ կապված ցանկացած հիմնախնդիր: Ծնողական ժողովները մերձեցնում են ուսուցիչներին և ծնողներին, ընտանիքին մոտեցնում են

դպրոցին, օգնում որոշել երեխայի կրթության վրա ազդելու ամենաօպտիմալ ուղիները: Ծնողական ժողովի ընթացքում համատեղ աշխատանքի արդյունքը պետք է լինի այն, որ ծնողները դառնան ավելի վստահ այն բանում, որ իրենց երեխաների դաստիարակության հարցում կարող են հենվել դասղեկի և մյուս ուսուցիչների աջակցության և օգնության վրա:

Ըստ մեր ուսումնասիրած գրականության տարրական դպրոցում կարելի է առանձնացնել ծնողական ժողովի հետևյալ ձևերը՝ *հանդիպումը զրույց, զրույց, ժողով-քննարկում, կլոր սեղան., հանդիպումը համաժողով, հանդիպում-սեմինար, ուսուցում -ժողով, ժողով- կազմակերպչական և ակտիվ խաղ:*

Տեսական նյութի վերլուծությունն ու ընդհանրացումը հնարավորություն են տալիս ձևակերպելու երկու հիմնական հետազոտական դիրքորոշում՝

1 Դպրոցի և ընտանիքի համագործակցության կազմակերպման հիմնական նպատակը պետք է լինի ընտանիքի ներգրավումը դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարման համակարգում, որտեղ ծնողները պետք է լինեն հավասարազոր սուբյեկտներ:

2 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դպրոցի և ընտանիքի համագործակցությունը ենթադրում է նրանց երեխաների' սոցիալականացման հավասարազոր սուբյեկտներ լինելը, դպրոցի կողմից ընտանիքին պետք է ցույց տրվի իրական հոգեբանական և սոցիալ-մանկավարժական օգնություն:

## ԳԼՈՒԽ 2

## ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ

## ՀԵՏ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ ԹԵՄԱՅՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Մեր դպրոցում տարրական դասարանների սովորողների ընտանիքների հետ աշխատանքի հիմնական ձևերը խմբակային և անհատական են:

**Անհատական ձևերը** ներառում են դասարանի ուսուցիչների կողմից կազմակերպված զրույցներ ծնողների հետ երեխայի ուսուցման և դաստիարակության հարցերի շուրջ, խորհրդակցություններ, անհրաժեշտության դեպքում, այցելություններ ընտանիք, որն օգնում է ավելի լավ ծանոթանալ երեխայի կյանքի պայմաններին, ֆինանսական վիճակին,ընտանիքի ապրելակերպին, ստուգել երեխայի առօրյան: Ընտանիք այցելելիս ուսուցիչը ծնողների հետ խոսում է երեխայի հետաքրքրությունների և հակումների, ծնողների, դպրոցի նկատմամբ վերաբերմունքի մասին, ծնողներին տեղեկացնում է երեխայի հաջողությունների մասին, խորհուրդներ է տալիս տնային առաջադրանքները կազմակերպելու վերաբերյալ, ծանոթանում ընտանեկան ավանդույթներին, ընտանիքի յուրաքանչյուր անդամի աշխատանքի բնույթը, բացահայտում է, թե ընտանիքի որ անդամն է ամենամեծ ազդեցությունն ունենում երեխայի վրա: Խորհրդակցությունները կարող են լինել թեմատիկ: Դրանք խորհուրդ է տրվում անցկացնել տոնական օրերին կամ երեխաների հետ բոլոր պարապմունքներից հետո, որպեսզի ուսուցիչը խստորեն չսահմանափակվի ժամանակով և կարողանա ազատ շփվել ծնողների հետ: Ծնողների հետ խորհրդակցությունները օգտակար են ինչպես իրենց, այնպես էլ ուսուցչի համար: Ծնողները իրական պատկերացում են կազմում դպրոցական գործերի և երեխայի վարքի մասին, իսկ ուսուցիչը ստանում է իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը յուրաքանչյուր աշակերտի խնդիրները ավելի լավ հասկանալու համար:

Ընտանիքի հետ աշխատանքի **խմբային ձևերի** համար համար մենք ներառում ենք ծնողների հոգեբանական և մանկավարժական պատրաստվածությունը: Մեր դպրոցի դասղեկներն օգտագործում են փոխգործակցության այնպիսի ձևեր,

ինչպիսիք են ծնողական հանդիպումները, ժողովները, հանդիպումները առարկայական ուսուցիչների հետ: Ծնողների հոգեբանական և մանկավարժական դաստիարակության մեջ ներգրավված են տարբեր ոլորտների մասնագետներ՝ բժիշկներ, ճանապարհային ոստիկանության տեսուչներ, հոգեբաններև այլն:

Մենք կատարել ենք հետազոտական աշխատանք ծնողների շրջանում ներքոնշյալ հարցաթերթիկով: Իհարկե, ծնողների պատասխաններից չի կարելի սպասել լիովին անկեղծություն, բայց ցանկացած դեպքում դրանք կարևոր տեղեկություններ են և մտածելու տեղիք են տալիս:

Հարցաթերթ

Հայտնի է, որ ով գիտի կարևոր տեղեկություններ երեխաների մասին, նա էլ տիրապետում է դաստիարակչական իրավիճակին: Դասվարի համար այդպիսի տեղեկությունները նրա մասնագիտական հարստությունն են, որոշումներ ընդունելու հիմքը, ուստի հարգելի ծնող խնդրում եմ լինել հնարավորինս անկեղծ հարցերին պատասխանելիս:

1. Հաճույքով է Ձեր երեխան գալիս դպրոց:
2. Որո՞նք են Ձեր երեխայի հիմնական մարդկային առավելությունները, ունակությունները:
3. Որո նք են Ձեր երեխայի թերությունները, թուլությունները:
4. Ո՞ ր առարկաներն է նա հետաքրքրությամբ ուսումնասիրում:
5. Ո՞ ր առարկաները չի սիրում, անտեսում է:
6. Հասցնում եք ամեն օր ստուգել պատրաստվել է դասերին , կատարել է տնային առաջադրանքները:
7. Ձեր երեխան ունի մշտական տնային պարտականություններ: Որո նք են նրա տնային պարտականությունները:
8. Ձեր երեխան ինչ ռեժիմով է ապրում տանը:

Հարցաթերթ

*Մեր դպրոցը աշակերտի ուսման ու բարեկեցության բարելավման համար ցանկանում է իմանալ, ինչպես ավելի լավ բավարարել մեր ծնողական կոլեկտիվի կարիքները ու ցանկությունները: Հարգելի ծնող, լրացնելով այս հարցաթերթը, դուք կօգնեք հասնել այդ նպատակին:*

*1. Ես /մենք ունենք երեխաներ.*

- *1-ին դասարանում*
- *2-րդ դասարանում*
- *3-րդ դասարանում*
- *4-րդ դասարանում*

*2. Խնդրու ենք նշել բոլոր ակտիվությունները, որոնք իրականացնում եք.*

*Ես/մենք այժմ մասնակցում ենք դպրոցում.*

- *Իմ երեխայի դասարանում/գրադարանում*
- *Մասնակցում եմ դասարանի ճանապարհորդություններին/միջոցառումներին*
- *Օգնում եմ կազմակերպել դպրոցական միջոցառումներ*
- *Պարապում եմ դպրոցի թիմին*
- *Դպրոցի կոմիտեի անդամ եմ*
- *Օգնում եմ դպրոցի համար ֆինանսավորում ձեռք բերելուն*
- *Ուրիշ, խնդրում եմ նշել .*
- *Ոչ մի բանի չեմ մասնակցում:*

*3. Խնդրում ենք նշել բոլոր համապատասխան դրույթները.*

*Ես/մենք չենք մասնակցում դպրոցի խորհրդի աշխատանքներին, որովհետև.*

- *Ծանրաբեռնված ենք երեխայի/ների խնամքով*
- *Դժվարանում ենք հասկանալ վրաց լեզուն*
- *Ոչ հարմարավետ եմ զգում ինձ դպրոցական միջավայրում*
- *Չեմ զգում ջերմ ընդունելություն դպրոցում*
- *Խորհրդի ճողովների անցկացման ժամանակը համընկնում է իմ աշխատանքային ժամերին*
- *Մասնակցում եմ դպրոցի այլ ակտիվությունների, որոնք անցկացվում են նույն ժամին*
- *Այս պահին մասնակցությունը չի հետաքրքրում*
- *Ուրիշ, խնդրում եմ նշել .*

*4. Դպրոց-ընտանիք հաղորդակցություն*

*Խնդրում ենք նշել հաղորդակցության ամենից արդյունավետ մեթոդը հետևյալ սանդղակի կիրառմամբ. 4 - ամենից արդյունավետ, 3 - արդյունավետ, 2 - նվազ արդյունավետ, 1- անարդյունավետ*

*Ձեր երեխայի ձեռքով նամակ ստանալ տանը*
*Փոստով նամակ ստանալ տանը*
*Էլեկտրոնային փոստ*
*Հեռախոսազանգ*
*Դեմառդեմ հանդիպում*
*Դպրոցի կայք-էջ*
*Դպրոցի էջ սոցիալական ցանցում*
*Ավտոմատ հաղորդակցման համակարգ*
*հանրային ցուցանակ*
*Ուրիշ, խնդրում եմ նշել .*

*5. Խնդրում ենք ստորև բերված սանդղակի կիրառմամբ նշել ձեր մասնակցության մակարդակը հետևյալ ակտիվություններին՝ 4– մշտապես 3 - երբեմն 2 - հազվադեպ 1 - երբեք*

*Մասնակցում եմ դպրոցի խորհրդի ժողովներին*
*Մասնակցում եմ դպրոցական ակտիվություններին*
*Գիրք եմ կարդում երեխայիս համար*

*Երեխաներիս հետ քննարկում եմ դպրոցական օրը*
*Հետևում եմ երեխայիս դասը պատրաստելուն*
*Խաղում եմ երեխայիս հետ*
*Հեռուստացույց, ուսումնական ծրագրեր նայում եմ իմ երեխայի հետ:*
*Համացանցն օգտագործում եմ իմ երեխայի հետ*
*Երեխայիս տանում եմ գրադարան*
*Այլ ծնողների հետ զրուցում եմ դպրոցի ու ուսման մասին*
*Պարբերաբար զրուցում եմ ուսուցչի հետ*
*Ուսուցչի հետ զրուցում եմ միայն իմ երեխայի առաջադիմության մասին*
*Մասնակցում եմ ծնողի/ուսուցչի հարցազրույցներին*
*Զրուցում տնօրենի հետ*
*Կարդում եմ բոլոր դպրոցական հաղորդագրությունները*
*Ուրիշ, խնդրում եմ նշել .*

*6. Տեղեկատվական նստաշրջանին ներկա գտնվելով կհետաքրքրվեի հետևյալ թեմաներով.*

- *տնային առաջադրանք*
- *գրագիտություն*
- *մաթեմատիկական մտածելակերպ*
- *ընթերցանություն*
- *վարքի մարտահրավեր*
- *համակարգչի օգտագործում*
- *ուրիշ, խնդրում եմ, նշել*

*7. Որ ժամանակն է հարմար տեղեկատվական նստաշրջանների համար*

- *9:00*
- *10:00.*
- *կեսօր*
- *16:00.*
- *18:00.*
- *ուրիշ, խնդրում եմ, նշել:*

Մեր առաջարկած հարցաթերթի պատասխանների հիման վրա եզրակացրել ենք, որ շատ դեպքերում ծնողը անտեղյակ է իր երեխայից, չգիտի նախասիրությունները, չի ստուգում դասերին պատրաստվածությունը: Այս ծնողների երեխաներն էլ չունեն հստակ նպատակներ և իմիջիայլոց են վերաբերվում կրթությանը: Կային ծնողներ, որոնք ամենայն ճշտությամբ տեղյակ էին, իրենց երեխայի ամեն մի նախասիրության մասին: Այս ծնողների երեխաները ավելի շատ են կարևորություն տալիս կրթությանը և ավելի պատրաստված են գալիս դպրոց: Նաև դրսևորում են ավելի լավ վարք: Սահմանելով վերջնարդյունքներ ուսուցիչը կարող է հասնել նրան, որ ուսուցիչը,

սովորողի ծնողը կամ օրինական ներկայցուցիչը սովորողների կրթության ու դաստիարակության հարցում ունենան միասնական պահանջներ ու նպատակներ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով ամփոփելով մեր կատարած հետազոտական աշխատանքը կարող ենք նշել՝

1. Ուսուցիչն առանցքային դերակատարում ունի սովորողների կրթության ու դաստիարակության գործընթացում սովորողի ծնողին կամ օրինական ներկայացուցչին ներգրավելու առումով:Ուսուցիչը, սովորողի ծնողը կամ օրինական ներկայցուցիչը սովորողների կրթության ու դաստիարակության հարցում պետք է ունենան միասնական պահանջներ ու նպատակներ:

2.Դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար: Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում: Ծնողների վստահության բարձրացումը դպրոցի ու ուսմոն նկատմամբ աշակերտներին օգնում ու մոտիվացնում են սովորել այնպիսի միջավայրում, որտեղ ծնողներին ընդունում են ընկերաբար, հարգում ու գնահատում:

3.Հետազոտումների համաձայն, աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում. Ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական ձեռքբերում և ավելի որակով կատարած տնային առաջադրանքներ, նրանց հաճախելիության ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են դպրոցի նկատմամբ և ունեն սեփական ածի և հնարավորությունների նկատմամբ հավատ:

4.Ծնողների ներգրավվածությունը դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը

հարստացնում է դպրոցի կուլտուրան և նպաստում է նրա զարգացմանը: Ավելի լավ արդյունքների հասնելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ:

5. Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը անհրաժեշտ է իրականացնել հետևյալ հիմնական ուղղություններով՝

- Սովորողների ուսումնաճանաչողական արդյունավետ գործունեության և ակտիվության ապահովման ռազմավարության և մարտավարության մշակում:
- Ուսուցիչների, սովորողների և նրանց ծնողների փոխգործակցության երկարաժամկետ համալիր ծրագրի մշակում՝ ընտանեկան դաստիարակության ավանդույթների վերածնման նպատակով:
- Ծնողների հոգեբանամանկավարժական, սոցիալական գիտելիքների հարստացման ուղղությամբ պլանավորված, անընդմեջ աշխատանքների կազմակերպում:
- Ընտանեկան դաստիարակության դրական փորձի փոխանակում համադպրոցական մակարդակում:
- Ուսուցիչների, ծնողների և երեխաների համաստեղ- ծագործական գործունեության և ազատ ժամանակի կազմակերպում՝ որպես փոխգործակցության կազմակերպման լավագույն տարբերակ:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- կարելի է կազմակերպել ծնողական ժողովներ և սեմինարներ ոչ թե դպրոցում, այլ ինչ որ տեղ հարևանությամբ, դպրոցի շատ աշակերտների բնակատեղին մոտ: Դպրոցից դուրս ժողովների անցկացումը կնպաստի ծնողների և դպրոցի միջև լարվածության վերացմանը:

-ցուցաբերել հատուկ հարգանք և արժևորում դպրոցի կյանքին կամավոր ներգրավված ծնողների նկատմամբ, ակտիվ կամավոր ծնողին/ներին հանձնել նվեր/ներ կամ «Ամենաակտիվ ծնողին» վկայական/դիպլոմ կամ ընդգծե՛լ նրանց վաստակը դպրոցի այլևայլ հանդիպումներին/միջոցառումներին.

-պլանավորե՛լ ամենամյա շնորհանդեսներ, որտեղ կքննարկվեն ծնողների հաջողությունները.

-ցանկալի է ուսուցիչների, դասվարների օգնությամբ ստեղծել աշակերտների բլոգներ, որոնք հասանելի կլինեն ծնողների համար:

-եթե ծնողը դպրոց չի կարող գնալ, ուսուցիչը պետք է էլեկտրոնային նամակ գրի նրան, որը ծնողին իր երեխայի մասին կհաղորդի անհատական տեղեկություն:

-կազմակերպել ցուցահանդեսներ, որտեղ դպրոցը կցուցադրի աշակերտների կողմից պատրաստած նմուշները (նկար, ձեռագործ, ձեռքի աշխատանք և այլն): Միջոցառմանը պետք է հրավիրել բոլոր ծնողներին և ցուցյ տալ իրենց երեխաների աշխատանքները:

-անցկացնոլ սեղանի կամ տրամաբանական խաղեր (շախմատ, շաշկի, բառեր գտնել, գրողների ստեղծագործությունների ճանաչում և այլն), որոնք կօգնեն այս կամ այն ունակության զարգացմանը: Հրավիրել ծնողներին և առաջարկել երեխաների հետ ներգրավվեն խաղի ընթացքին:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Վ. Ս. Սուխոմլինսկին դաստիարակության մասին, Եր.: «Լույս», 1976, 335 էջ
2. Հանձնարարականներ տնօրենների և ուսուցիչների համար Ծնողների ներգրավվածությունը Թբիլիսի ,2011, USAID,
3. Բաումրինդ Դ. Երեխայի վարքի հեղինակավոր ծնողական վերահսկողության հետևանքները: Կալիֆոռնիա. Կալիֆոռնիայի համալսարան, 2011 թ.
4. Сухомлинский В.А. Как воспитать настоящего человека: Педагогическое наследие / Сост. О.В. Сухомлинская —— М.: Педагогика 1990. — 288 с. — (Б-ка учителя)
5. И.П. Подласый. Педагогика: 100 вопросов - 100 ответов: учеб. пособие для студентов вузов. – М.: Изд-во ВЛАДОС ПРЕСС, 2006. – 365 с
6. GEORGIA PRIMARY EDUCATION PROJECT MONTHLY REPORT FEBRUARY 1-29, 2016 Contract No. AID-114-C-11-00003